ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

Ք. Երևան « 12 » ապրիլ 2024թ.
ժամը՝ 10:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«22» փետրվարի 2024թ. թիվ 304-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս, ՀՀ Լոռու մարզի Գարգառ, Բազում, Միխայլովկա, Կաթնառատ, ՀՀ Սյունիքի մարզի Շաքի բնակավայրերի կրթահամալիրների կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Ֆելիքս Սարգսյան ՝ Հանձնաժողովի նախագահ **(բացակա անդամ)**
Արմեն Դանիելյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արաքսյա Իսախանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ **(բացակա անդամ)**
Վարդինե Իսահակյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 Հայտերը բացվել են **2024 թվականի ապրիլի 12-ին, ժամը 10:00-ին** էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 , 4-րդ հարկ, 407 սենյակ հասցեում:

2. Տեղեկություն՝ հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

2.1 Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

ՀՀ	Մասնակիցների անվանումները	Հասցե, էլեկտրոնային փոստ,	հեռախոս
1	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ Ինվիերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին»ՍՊԸ ենթակապալառու	Ք. Երևան, Վարդանանց 112, rafojakh@gmail.com	099 24 55 57
		Ք Երևան, Գ. Նժդեհի փ., 46, opier.group@mail.ru	077 52 96 98
		Արարատ,Դեղձուտ, Ե. Չարենցի փ. S 36 Royshin@mail.ru	033 97 90 90
2	«Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին»	Ք. Վանաձոր, Բաղրամյան 21/9, R. ghazaryanllc@mail.ru,	091 00 59 59

	ՍՊԸ կոնսորցիում	Ք. Վանաձոր, Տիգրան մեծի 24/52, ajposhin@mail.ru,	094 49 57 11
3	«Արտ Պլաս»ՍՊԸ	Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի 5, artplas@inbox.ru,	98 02 04

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Մասնակիցների Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման Առարկան	Նախահաշվային պլանավորված Գինը	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	*Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)*
1	*«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրների կառուցման» աշխատանքներ*	1,150,077,397	Հայտ չի ներկայացվել				
2	*«ՀՀ Լոռու մարզի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	1,150,077,397	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին» ՍՊԸ ենթակապալառու	1 053 980 670 (Մեկ միլիարդ հիսուներեք միլիոն ինը հարյուր ութսուն հազար վեց հարյուր յոթանասուն)	210 796 134 (Երկու հարյուր տաս միլիոն յոթ հարյուր ինսունվեց հազար հարյուր երեսունչորս)	1 264 776 804 (Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր չորս)	Առկա է
3	*«ՀՀ Լոռու մարզի Բազում բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	1,150,077,397	«Ռ.Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիում	1 054 100 000 / Մեկ միլիարդ հիսունչորս միլիոն մեկ հարյուր հազար/	210 820 000 / Երկու հարյուր տաս միլիոն ութ հարյուր քսան հազար/	1 264 920 000 / Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն ինը հարյուր քսան հազար/	Առկա է
4	*«ՀՀ Լոռու մարզի Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	1,150,077,397	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին»	1 053 980 670 (Մեկ միլիարդ հիսուներեք միլիոն ինը հարյուր ութսուն հազար վեց հարյուր յոթանասուն)	210 796 134 (Երկու հարյուր տաս միլիոն յոթ հարյուր ինսունվեց հազար հարյուր երեսունչորս)	1 264 776 804 (Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր չորս)	Առկա է

			ՍՊԸ ենթակապալառու				
5	*«ՀՀ Լոռու մարզի Կաթնառատ բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	1,150,077,397	Հայտ չի ներկայացվել				
6	«ՀՀ Սյունիքի մարզի Շաքի բնակավայրերի կրթահամալիրների կառուցման» աշխատանքներ	1,052,637,706	«ԱրտՊլաս»ՍՊԸ	964 750 000 / ինը հարյուր վաթսունչորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/	192 950 000 / մեկ հարյուր ինսունվերկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար/	1 157 700 000 / մեկ միլիարդ մեկ հարյուր հիսունյոթ միլիոն յոթ հարյուր հազար/	Առկա է

4.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը / հայտերով ներկայացրած գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

4.3 Հանձնաժողովը որոշեց ՀՏՀՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

5.Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Հանձնաժողովը փաստում է, որ հայտերը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել են Armeps (www.armeps.am) էլեկտրոնային տարբերակով և ենթակա են հետագա գնահատման:

6.Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

6.1 «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիումի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակիցների անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

6.2 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված հայտի ապահովումները Մասնակիցների կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով

հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովումների իսկությունը:

7.Հանձնաժողովը որոշեց.

7.1 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.1-րդ կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ Ունիվերսալ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիումի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի ՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

7.2 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկերին՝ պարզելու Մասնակիցների բանկային երաշխիքների իսկությունը:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նիստը

նախագահող՝

Ֆելիքս Սարգսյան _____

անդամներ՝

Արմեն Դանիելյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Արաքսյա Իսախանյան _____

Լուսինե Ղազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Ռոզա Ասատրյան _____